ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2025 թվականի N 119-Ա

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ և 76-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանարապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի դրույթների 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի բ/ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Խնձորեսկ գյուղի թիվ 3 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,3257 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-045-0160-0008) մակերեսով հողամասը՝ մրցույթով, 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, մեկնարկային վճարի չափ սահմանելով տարեկան 62000 (վաթսուներկու հազար) ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 10
ք. Գորիս